

# ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ

տ ե ղ ե կ ա գ ի թ N 37

Հ ու ն ի ս 2012

«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:



Հրապարակվում է 2001 թվականից

[www.foi.am](http://www.foi.am)

[www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/CONTENT

## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացվեց «Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդեսը .....	4
Հայաստանը Բրազիլիայում ներկայացրեց Բաց կառավարման գործընկերության ՀՀ գործողությունների ծրագիրը.. ..	6
316 համայնքային ծառայող ստացավ պետական վկայական .....	9
Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանություն. առաջընթացները և խնդիրները .....	10

## ՏԱ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Դատարանում ԱԻՆ-ը տրամադրեց հայցվող տեղեկությունը.....	12
ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Սարիաննա» ՍՊԸ-ի .....	13

## ՏԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թղթի գնումները նախարարություններում 2011-2012.. ..	14
Տեղեկատվության ազատությունը քաղաքապետարաններում-2012 .....	17

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Կայացավ ՏՎԽ առաջին աշխատանքային քննարկումը.....	19
ՏՎԽ-ի փորձագիտական եզրակացությունն «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեդելի վ Արմեննիի» պարբերականների դեմ գործի վերաբերյալ .....	21
ՏՎԽ-ի փորձագիտական եզրակացությունն փաստաբան Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի վճռի վերաբերյալ .....	23
ՏՎԽ-ի փորձագիտական եզրակացությունը Ա. Ավետիսյանն ընդդեմ Լ. Բարսեղյանի դեմ դատական հայցի վերաբերյալ .....	26
<u>ՍԵՎ ՑՈՒՑԱԿ. 2012թ.-ի առաջին և երկրորդ եռամսյակներ</u> .....	28

## Բացվեց «Մամուլի ազատություն, տեղեկատվություն ստանալու իրավունք» ֆոտոցուցահանդեսը

2012թ.-ի մայիսի 3-ին Մամուլի ազատության միջազգային օրը նշանավորելու նպատակով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը Հայաստանի Նկարիչների միության տանը կազմակերպեց «Մամուլի ազատություն, տեղեկատվության ստանալու իրավունք» խորագրով լուսանկարների ցուցահանդես: Միջոցառումը յուրահատուկ ակցիա էր հանրության ուշադրությունը մեկ անգամ ևս բևեռելու մամուլի և տեղեկատվության ազատության հիմնահարցերին:



ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Յրիսթեան

**Ց**ուցահանդեսի բացման արարողությանը ներկա էին պաշտոնյաներ, լրագրողներ, հասարակական գործիչներ, դիվանագետներ և այլք: Ներկաներին նախ ողջունեց Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Յրիսթեան՝ կարևորելով այս ցուցահանդեսը՝ որպես տեղեկատվության և մամուլի ազատության մասին հանրային ընկալումները ներկայացնելու ինքնատիպ միջոց. «Այսօր նշում ենք Մամուլի ազատության օրը: Եվրոպական միությունը մշտապես սատարել է խոսքի և կարծիքի ազատ արտահայտմանը, քանի որ այն մարդու հիմնարար իրավունքների մասն է կազմում: Ցանկանում եմ օգտվել այս առիթից և կարևորել լրագրողների աշխարհի ցանկացած վայրում իրականացրած աշխատանքը, քանի որ ազատ արտահայտվելու իրավունքն իրականացնելու համար նրանք երբեմն վտանգի են ենթարկում իրենց կյանքը»:

ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Յեֆերնը գովասանքի խոսքեր ասաց կազմակերպիչներին և կարևորեց ազատ մամուլի և տեղեկատվության մատչելիության դերը ժողովրդավարության կայացման գործում: Դեսպան Յեֆերնը Ինֆորմացիայի ազատության կենտրոնին կոչ արեց շարունակել պետական հաստատությունների թափանցիկության և հաշվետվողականության զարգացմանն ուղղված իրենց արդյունավետ ջանքերը:

ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սոռոկինը շեշտեց մամուլի և տեղեկատվության ազատության դերը բաց և հաշվետու կառավարության ձևավորման գործընթացում. «Հուսով եմք, որ այսօրվա ցուցահանդեսը կառավարությանը, ՋԼՄ-ներին և հասարակությանը կհիշեցնի, թե իրենցից յուրաքանչյուրն ինչ դեր ունի ազատ խոսքի և տեղեկատվության իրավունքի կիրառման հարցում»:



Զախից՝ աջ. ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Յեֆերնը և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սոռոկինը

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյրոյանն իր ելույթում նշեց. «Սա հատուկ ֆոտոցուցահանդես է, քանի որ այստեղ յուրաքանչյուր ոք՝ քաղաքացի, լրագրող, պրոֆեսիոնալ լուսանկարիչ, հնարավորություն ունեցավ ներկայացնելու իր աշխատանքը: Այս լուսանկարներում պատկերված հերոսներն իրենց անհամաձայնությունն են հայտնում մամուլի ազատության հանդեպ կատարվող բռնությունների նկատմամբ, ինչպես նաև փորձում են իրականացնել իրենց տեղեկատվություն ստանալու իրավունքը՝ անկախ խոչընդոտներից և արգելքներից»:

Ֆոտոցուցահանդեսին մասնակցել են լուսանկարիչներ, ծաղրանկարիչներ, լրագրողներ, քաղաքացիներ, ուսանողներ և այլք՝ ներկայացնելով 200-ից ավելի լուսանկարներ և ծաղրանկարներ, որոնցից ժյուրին ընտրել է 50 լուսանկար և 20 ծաղրանկար այս ցուցահանդեսում ցուցադրելու նպատակով: Լուսանկարների հիմնական թեման մամուլի և տեղեկատվության ազատությունն է: Ցուցադրված բոլոր լուսանկարներն ու ծաղրանկարները տպագրված են մամուլի ազատության համաշխարհային օրվան նվիրված ֆոտոկատալոգում:



ԻԱԿ նախագահ Շուշան Դոյրոյանը



ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը ցուցահանդեսի մասնակից, լուսանկարիչ Անահիտ Հայրապետյանի և նրա որդու հետ



ՀՀ Կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը

# Հայաստանը Բրազիլիայում ներկայացրեց Բաց կառավարման գործընկերության ՀՀ գործողությունների ծրագիրը

Ապրիլի 17-ից 18-ը Բրազիլիայի մայրաքաղաքում կայացավ Բաց կառավարման գործընկերության առաջին տարեկան հավաքը, որին մասնակցեց նաև ՀՀ պատվիրակությունը: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի փորձագետ Լիանա Դոյդոյանը Բրազիլիայում ներկայացրեց Հայաստանի գործողությունների ծրագրի մշակման փուլում հայաստանյան հասարակական կազմակերպությունների մասնակցության գործընթացը:



**Բ**աց կառավարման գործընկերության տարեկան հավաքին ներկա էին ավելի քան 60 անդամ երկրների 800 ներկայացուցիչ և շուրջ 200 հասարակական կազմակերպություններ: Հանդիպման բացման արարողությանը ելույթ ունեցան ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Բլինթենը, Վրաստանի վարչապետ Նիկա Գելաուրին, Տանզանիայի նախագահ Ջակատա Կիկուետեն և Բրազիլիայի նախագահ Դիլմա Ռուսեֆը, որոնք ներկայացրին այս լայնածավալ նախաձեռնության հիմնական խնդիրներն ու հետագա անելիքները:

Այնուհետև, անդամ երկրներն առանձին խմբերով ներկայացրին իրենց գործողությունների ծրագրերը և բաց կառավարմանն ուղղված պարտավորությունները, որոնք կիրականացվեն 2012-2014 թվականների ընթացքում:

Հարավային Կովկասի խմբում ներգրավված երեք երկրները՝ Հայաստան, Վրաստան և Ադրբեջան, մանրամասն ներկայացրին գործողությունների ծրագրերը: ՀՀ գործողությունների ծրագրի հիմնական նպատակների, ուղղությունների և պարտավորությունների մասին խոսեց ՀՀ արտաքին գործերի փոխնախարար, ԲԿԳ հայաստանյան աշխատանքային խմբի ղեկավար Աշոտ Հովակիմյանը: Նա իր ելույթում շեշտեց, որ՝ «Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնությանը միանալու որոշումն արտահայտում է Հայաստանի պատրաստակամությունն առավել թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովել հանրային ծառայություններ մատուցելիս: Օրենքի գերակայությունը և արդյունավետ կառավարման ամրապնդումը պետության առաջնայնությունն է, և վերջին տասնամյակի ընթացքում երկրի իշխանու-

թյունն այս ուղղությամբ մի շարք միջոցառումներ է իրականացրել»: Հայաստանի գործողությունների ծրագրի հիմնական դրույթները նպատակաուղղված են Հայաստանում հանրային կառավարման համակարգի արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանը. հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, էլեկտրոնային կառավարման զարգացում, գնումների գործընթացի կատարելագործում և թափանցիկության ապահովում, տեղեկատվության ազատության և մատչելիության բարելավում, պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերի հրապարակայնացում, կոռուպցիայի դեմ պայքար և այլն:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի փորձագետ, ԲԿԳ հայաստանյան աշխատանքային խմբի անդամ Լիանա Դոյոյանը ներկաներին տեղեկացրեց, որ հայաստանյան գործողությունների ծրագրի մշակման աշխատանքային խմբում ներգրավված են եղել քաղաքացիական հասարակության 8 ներկայացուցիչներ, որոնց ներկայացրած բոլոր առաջարկները ներառվել են փաստաթղթում: «Մասնավորապես Ինֆորմացիայի ազատության կենտրոնն առաջարկել էր բաց կառավարմանն ուղղված երկամյա ծրագրում ընդգրկել ավելի քան 10 կետ, որոնք հիմնականում ուղղված են պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության և դրանցում հրապարակվող տեղեկատվության, տեղեկատվության ազատության ոլորտում պաշտոնյաների գիտելիքի և հմտությունների բարելավմանը, պաշտոնյաների գույքի և եկամտի հայտարարագրերի հրապարակայնության ապահովմանը և այլն»- նշեց Լիանա Դոյոյանը:

Վրաստանի և Ադրբեջանի գործողությունների ծրագրերը ներկայացրեցին համապատասխանաբար Վրաստանի Արդարադատության փոխնախարար Գեորգի Վաշաձեն և Ադրբեջանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ալի Աբասովը: Այս երկու երկրներն էլ բավականին մեծ պաշտոնական պատվիրակությամբ էին ժամանել Բրազիլիա: Վրաստանի վարչապետի գլխավորությամբ ներկայացված պատվիրակությունն ամենաներկայանալիներից էր այստեղ: Ադրբեջանի պաշտոնական պատվիրակությունը 15 անդամից էր բաղկացած:

Վրաստանի արդարադատության փոխնախարարը իր ելույթում պատմեց, որ հանրությանը ծառայու-



թյուններ մատուցելու համար Վրաստանը կիրառելու է այսպես ասած մեկ պատուհանի սկզբունքը. քաղաքացիներին անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի և գործարքների համար մարդիկ այցելելու են մեկ միասնական կենտրոն:

Ադրբեջանի ծրագիրը կազմում է 21 էջ, որը պահանջված չափից կրկնակի ավել է: Այստեղ խնդիրների մեջ ներառնված են կոռուպցիայի և քրեական հանցագործությունների դեմ պայքարը, հանրային կառավարման խթանմանն ուղղված միջոցառումները և այլն: Նախարարի ելույթին հաջորդած «Ազգային բյուջեի խումբ» ՀԿ ներկայացուցիչ Գալիբ Աբասզադեն իր խոսքում քննադատեց Ադրբեջանը՝ կոռուպցիայի մասով, ինչը անպատասխան չթողեցին նախարարն ու դաիճում եղած ադրբեջանցի պաշտոնյաները:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ղեկավար Լևոն Բարսեղյանի այն հարցին, թե երեք երկրներում ովքեր, ինչ մարմիններ կան գերատեսչություններ են պատասխանատու լինելու գործողությունների ծրագրերի իրականացման համար, ՀՀ ԱԳՆ փոխնախարար Ա. Հովակիմյանը պատասխանեց, թե այդ գործողությունները տարբեր գերատեսչություններ են իրականացնելու, Վրաստանի արդարադատության փոխնախարարը պատասխանեց զրեթե նույնկերպ, իսկ Ադրբեջանի ներկայացուցիչը բացատրեց, որ Ծրագրի յուրա-

քանչյուր կետով կոնկրետ գերատեսչություններ կամ նախարարություններ են զբաղվում, բայց գլխավոր ղեկավարը Ադրբեջանի նախագահն է:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն իրենց հերթին կարևորեցին գործողությունների ծրագրի հետագա իրականացումը և քաղաքացիական վերահսկողությունը իշխանությունների ստանձնած այս պարտավորությունների նկատմամբ:

Բաց կառավարման գործընկերությունը ստեղծվել է 2011-ին սեպտեմբերին՝ 8 երկրների նախաձեռնությամբ (Բրազիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ): Այս նախաձեռնությանն այսօր արդեն միացել է ավելի քան 60 երկիր: Հայաստանի Հանրապետությունն անդամակցել է նախաձեռնությանը 2011-ի նոյեմբերին: ԲԿԳ հռչակագրում ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարողների գործողությունների մասին հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ունենալ առավել թափանցիկ և պատասխանատու իշխանություններ:

Հայաստանի գործողությունների պլանին կարող եք ծանոթանալ ՀՀ արտաքին գործերի նախարարության կայքից՝ [http://mfa.am/u\\_files/file/OGPAP\\_Armenia\\_English.pdf](http://mfa.am/u_files/file/OGPAP_Armenia_English.pdf):

Փաստաթղթի օրգինալ և պաշտոնական տարբերակն անգլերեն է:



## 316 համայնքային ծառայող ստացավ պետական վկայական

316 համայնքային ծառայող 2011-2012թթ.. վերապատրաստվել է Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնում:

**Տ**եղեկատվության ազատության կրթական կենտրոնում 2012թ. մարտից վերսկսեցին վերապատրաստման դասընթացները, որոնք իրականացվում են ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 129-Ա հրամանով հաստատված «Միջանձնային հարաբերությունները, տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը տեղական ինքնակառավարման համակարգում» վերապատրաստման ծրագրով: Յուրաքանչյուր դասընթաց տևում է 3 օր:

Դասընթացն ավարտելուց հետո մասնակիցներին շնորհվում են պետական վկայականներ՝ վավերացված ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ԻԱԿ-ի և Հայ պետական ծառայողների միության կողմից:

2012թ. մայիսի 16-ի դրությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնում 3-օրյա վերապատրաստման դասընթաց է անցել 316 համայնքային ծառայող՝ Կոտայքի, Արարատի, Արագածոտնի և Լոռու մարզերի տարբեր քաղաքային և գյուղական համայնքներից:

Վերապատրաստման դասընթացին մասնակցած համայնքային ծառայողների 87 տոկոսը դասընթացը գնահատել է շատ օգտակար, 13 տոկոսը՝ օգտակար: Այն հարցին, թե արդյոք զգո՞ւմ եք ձեր գիտելիքը տվյալ թեմայով լրացնելու կարիք և կկիրառե՞ք արդյոք ստացված գիտելիքն առօրյա աշխատանքի ընթացքում, բոլոր մասնակիցները՝ 316 համայնքային ծառայող, դրական պատասխան են տվել:



Մինչ 2013 թվականը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Տեղեկատվության ազատության կրթական կենտրոնում կվերապատրաստվի ևս 84 համայնքային ծառայող:

Նշենք, որ որպես ուսուցումների անցկացման ինստիտուցիոնալ հիմք՝ 2010թ.-ի նոյեմբերին ԻԱԿ-ը հիմնադրեց «Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնը»՝ դառնալով պետական պաշտոնյաներին ՏԱ ազատության վերաբերյալ գիտելիքով և հմտություններով ապահովող կայուն ինստիտուցիոնալ մեխանիզմ:

## Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանություն. առաջընթացները և խնդիրները

2012թ.-ի հունիսի 15-ից 16-ը Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում տեղի ունեցավ «Տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանություն. առաջընթացները և խնդիրները» համաժողով, որը նվիրված էր տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության ոլորտում Բուլղարիայի «Տեղեկատվության մատչելիության ծրագիր» կազմակերպության հիմնադրման 15-ամյակին:



Համաժողովը բացեց «Տեղեկատվության մատչելիության ծրագիր» կազմակերպության գործադիր տնօրեն Գերգանա ժուլևան: Մասնակիցների թվում էին Հայաստանի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հիմնադիր անդամ Լիանա Դոյոյանը և Կենտրոնի իրավաբան Գևորգ Հայրապետյանը, Իրավունքի և ժողովրդավարության կենտրոնի տնօրեն, Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցի ղեկավար նախագահ Թոբի Մենդելը, «Տեղեկատվության մատչելիություն Եվրոպա» (Access Info Europe) տնօրեն Յելեն Դերբիշչերը և «Statewatch» ՀԿ-ի տնօրեն Թոմի Բունյանը: Կոնֆերանսին նաև մասնակցում էին տեղեկատվության ազատության ոլորտում առաջատար դեր ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ Կիպրոսից, Վրաստանից, Մակեդոնիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Ռումինիայից և Չեխիայից:

Ողջույնի խոսքով հանդես եկան Բուլղարիայի Մարդու իրավունքների պաշտպանի գլխավոր քարտուղար տիկին Ռոսիցա Տոկովան, Տեղեկատվական անվտանգության պետական հանձնաժողովի նախագահ տիկին Սվետա Մարկովան, Անհատական տվյալների պաշտպանության կոմիտեի նախագահ Վենետա Շոպովան:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադիր անդամ Լիանա Դոյոյանը ներկայացրեց հանրային քարոզարշավի անցկացման ուղղությամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տաս տարիների փորձը, ԻԱԿ-ի իրականացրած հանրային ծրագրերը և միջոցառումները: Կենտրոնի իրավաբան Գևորգ Հայրապետյանը ներկայացրեց Հայաստանում տեղեկատվություն տնօրինող մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկատվության հրապարակման (տեղեկատվության պրակտիկ հրապարակման) պրակտիկան, օրենսդրական կարգավորումը, ինչպես նաև տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ ՀՀ օրեսդրության հիմնական դրույթները:

Համաժողովին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նաև «Ոսկե բանալի» մրցանակ հանձնեց «Տեղեկատվության մատչելիության ծրագիր» կազմակերպության ղեկավար Գերգանա ժուլևային որպես 15 տարիների ընթացքում ՏԱ հիմնախնդիրներով հետևողականորեն զբաղվող կազմակերպություն և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի լավագույն բարեկամ ՀԿ:

Երկու օր տևած համաժողովի ընթացքում տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանները ներկայացրեցին ՏԱ պաշտպանության իրենց փորձը:

Ուսումնասիրվեցին Ես մարմինների փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ Ես 1049/2011

Կանոնակարգում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ վերջին զարգացումները և միջազգային պայմանագրերով սահմանված չափորոշիչները: Քննարկվեց տեղեկատվություն տնօրինող մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկատվության հրապարակման (տեղեկատվության պրոակտիվ հրապարակման) մոնիթորինգի ազդեցությունը պետական մարմինների թափանցիկության բարձրացման վրա:

Հասարակական կազմակերպությունները և լրագրողները ներկայացրեցին հանրային քարոզարշավների, պետական կառավարմանը հասարակության մասնակցության և լրագրողական հետաքննությունների համար հրապարակային տեղեկատվության մատչելիության օգտագործման մեթոդները:

Տարբեր երկրների ՏԱ փորձագետները ներկայացրին ՏԱ մասին իրազեկության բարձրացման քարոզարշավների իրենց մոդելները, պատմեցին Տեղեկատվության ազատության միջազգային օրվան նվիրված միջոցառումների մասին՝ որպես տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության հաջող գործիք:

Քննարկվեցին ՏԱ պաշտպանների դերը Բաց կառավարման գործընկերությունում և ապագա նախաձեռնությունների հնարավորությունները:

Համաժողովի ընթացքում արձանագրված հետևությունները և ռազմավարական հետագա քայլերը կներառվեն վերջնական փաստաթղթում, որը կներկայացվի Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցին:

*Տես ավելին՝ <http://www.aip-bg.org/en/>:*

## **Դատարանում ԱԻՆ-ը տրամադրեց հայցվող տեղեկությունը**

Մայիսի 21-ին ՀՀ վարչական դատարանում տեղի ունեցավ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության նախնական դատական միստր, որի ժամանակ ԱԻ նախարարության ներկայացուցիչը ԻԱԿ-ին առձեռն տրամադրեց այն տեղեկատվությունը, ինչը ստանալու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր դատարան:

**Վ**երջապես 7 ամիս տևած լուծումնից հետո ՀՀ վարչական դատարանի դատավոր Արգիշտի Ղազարյանը նշանակեց ԻԱԿ-ն ընդդեմ Արտակարգ իրավիճակների նախարարության նախնական դատական միստի օրը, որը տեղի ունեցավ 2012թ.-ի մայիսի 21-ին:

Դեռևս 2011թ.-ի փետրվարի 7-ին ԻԱԿ-ը գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ խնդրելով հայտնել, թե կա՞ն արդյոք նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնազերծվել են 2010թ.-ին, և եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները:

ՀՀ ԱԻ նախարարությունը հղում էր արել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը՝ նշելով, որ այդ փաստաթղթերն առգրավվել են ՀՀ ՀԶԾ-ի կողմից: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը, սակայն, ԻԱԿ-ին տեղեկացրել էր, որ առգրավված փաստաթղթերի պատճեններն առկա են ԱԻ նախարարությունում: Այսինքն, տեղեկատվություն տնօրինողը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն էր: Ուստի 2011թ.-ի մարտի 29-ին ԻԱԿ-ը կրկին դիմել էր նախարարությանը, սակայն ԱԻՆ-ը անպատասխան էր թողել գաղտնազերծված փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին ԻԱԿ-ի հարցումը: ԱԻՆ-ը անպատասխան էր թողել նաև ԻԱԿ-ի՝ 25.05.2011թ.-ի և 20.10.2011թ.-ի հարցումները:

Արդյունքում, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ. նոյեմբերի 8-ին դիմել էր դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը հնգօրյա ժամկետում տրամադրել հայցվող տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ ԱԻ նախարար Արմեն Երիցյանին ենթարկել վարչական պատասխանատվության 50.000 ՀՀ դրամի չափով:

Մայիսի 21-ին ՀՀ վարչական դատարանում տեղի ունեցավ ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության նախնական դատական միստի հենց սկզբում ԱԻ նախարարության ներկայացուցիչը դատարանին և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ներկայացուցիչին առձեռն տրամադրեց պահանջված տեղեկատվություն 2010թ.-ին նախարարության տնօրինության տակ գտնվող գաղտնազերծված փաստաթղթերի վերաբերյալ:

Անմիջապես դատարանում կնքվեց հաշտության համաձայնություն ԻԱԿ-ի և ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության միջև: Ի դեպ, ԱԻՆ-ի տրամադրած 51 էջից բաղկացած գաղտնազերծված փաստաթղթերը վերաբերում են ալյուրի ձեռքբերմանը:

Նախարարության տրամադրած տեղեկությանը կարող եք ծանոթանալ [givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքում՝ <http://www.givemeinfo.am/hy/case/378/>:

## ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի

2012թ.-ի ապրիլի 16-ին ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել ԻԱԿ-ի հայցադիմումը՝ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու մասով: ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի դատական միստը տեղի կունենա 2012թ.-ի հուլիսի 18-ին, ժամը 12:00-ին ՀՀ վարչական դատարանի թիվ 316 միստերի դահլիճում:

**Ի**նֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի նոյեմբերի 18-ին տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ խնդրելով հետևյալ տեղեկությունները.

1. Ընկերության արտադրած կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե ընկերության կաթնամթերքներից ո՞րն է բնական կաթից, որը՝ ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Կազմակերպությունը ԻԱԿ-ի հարցումը թողեց անպատասխան: Ուստի, 2011թ.-ի դեկտեմբերի 6-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցում ուղարկեց ՍՊԸ-ին՝ խնդրելով տրամադրել վերոնշյալ տեղեկությունները:

Կրկնակի հարցմանն ի պատասխան՝ 2011թ.-ի դեկտեմբերի 16-ին ՍՊԸ-ից ստացվեց էլեկտրոնային պատասխան, ըստ որի՝ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը մակնշված է կազմակերպության արտադրանքի յուրաքանչյուր տուփի վրա, ինչպես նաև, հետաքրքրող տեղեկությունները ստանալու համար հղում էր արված կազմակերպության ինտերնետային կայքին: Սակայն ԻԱԿ-ի խնդրած տեղեկություններն առկա չէին ոչ կազմակերպության արտադրանքի տուփերի վրա, ոչ էլ կայքում: Ուստի, պատասխանը համարվեց անհիմն:

Արդյունքում, 2011թ.-ի դեկտեմբերի 19-ին ԻԱԿ-ը հայցով դիմեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև խնդրված տեղեկությունները չտրամադրելու համար կազմակերպության տնօրեն Տիգրան Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատարանը 2012թ. հունվարի 26-ին որոշում կայացրեց մերժել ԻԱԿ-ի հայցադիմումը:

մը վարույթ ընդունել՝ գտնելով, որ հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության՝ պատճառաբանելով, որ նշված ընկերությունը պարզապես չափույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) ընկերություն է, հետևաբար «ներկայացված հայցապահանջները չեն բխում հանրային իրավահարաբերություններից...»: Այլ կերպ ասած՝ դատարանը համարեց, որ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ն հանրային նշանակություն չունի: Այնինչ, ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ Հայաստանում ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ է համարվում «Դուստր Մարիաննա» ընկերությունը: Իսկ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկաներում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունները համարվում են հանրային նշանակության կազմակերպություններ և տեղեկատվություն տնօրինողներ են:

13.02.2012թ.-ին ԻԱԿ-ը բողոքարկեց վարչական դատարանի վերոնշյալ որոշումը, և մարտի 5-ին վարչական վերաքննիչ դատարանը ԻԱԿ-ի բողոքը բավարարեց մասնակիորեն: Դատարանը «Դուստր Մարիաննա» ընկերությանը տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցնելու մասով մերժեց ԻԱԿ-ի հայցապահանջը, իսկ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով, բավարարեց:

16.04.2012թ. ՀՀ վարչական դատարանը ԻԱԿ-ի հայցադիմումը՝ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու մասով, ընդունեց վարույթ: Դատական միստը տեղի կունենա 2012թ.-ի հուլիսի 18-ին, ժամը 12:00-ին ՀՀ վարչական դատարանի թիվ 316 միստերի դահլիճում:

## **Թղթի գնումները նախարարություններում 2011-2012**

2012թ.-ին թղթի ձեռքբերման նպատակով ամենաշատ գումարը նախատեսվել է ՀՀ ֆինանսների նախարարության համար՝ 10 միլիոն 960 հազար ՀՀ դրամ, իսկ ամենաքիչ գումարը՝ ՀՀ սփյուռքի նախարարության համար՝ 840 հազար ՀՀ դրամ:

**2012**թ.-ի փետրվարի 2-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցումներ ուղարկեց ՀՀ բոլոր նախարարություններին՝ խնդրելով հայտնել, թե որքա՞ն գումար է ծախսվել 2011թ.-ին նախարարությունների համար թղթի ձեռքբերման նպատակով, նախարարությունների կողմից ի՞նչ ծավալի թուղթ է ծախսվել 2011թ.-ին և որքա՞ն գումար է նախատեսվել 2012թ.-ի բյուջեով նախարարությունների կարիքների համար թղթի ձեռքբերման նպատակով:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն այս նախաձեռնությունը սկսել է 2010թ.-ից. ՀՀ բոլոր նախարարություններին մանաբովանդակ հարցումներ են ուղարկվել նաև 2010թ.-ի նոյեմբերին և 2011թ.-ի մայիսին: Այս նախաձեռնության նպատակն է պարզել, թե պետական կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբերի համակարգի ներդրումն ինչպես է ազդել նախարարություններում թղթի (գրեմական պարագաների) համար ծախսվող գումարների վրա: 2010 և 2011թ.թ.-ի վերոնշյալ հարցումների վերլուծությանը կարող եք ծանոթանալ ԻԱԿ-ի կայքում՝ <http://www.foi.am/hy/research/item/877/>:

Նախ ներկայացնենք, թե ինչպես են նախարարությունները պատասխանել այս հարցումներին, որքանով են պահպանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

### **Պատասխան գրությունների բովանդակությունը**

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ բոլոր 18 նախարարություններին ուղարկված հարցումներից ոչ մեկը չի մնացել անպատասխան: 18 նախարարություններից 16-ը հարցմանը տրամադրել է լիարժեք պատասխան: 1 հարցման դեպքում տեղեկատվության տրամադրումը մերժվել է, 1 դեպքում էլ տրամադրվել է թերի պատասխան:

Ամենաբովանդակալից պատասխանները տրամադրել են ՀՀ արդարադատության, Արտակարգ իրավիճակների և Ֆինանսների նախարարությունները: ՀՀ արդարադատության նախարարությունը խնդրված տեղեկությունները տրամադրելուց բացի նաև նշել էր, որ 2011թ.-ի համեմատությամբ 2012թ.-ի համար նախատեսված թղթի ձեռքբերման գումարն ավելացել է 1.404.000 ՀՀ դրամով և պատճառաբանել էր այդ ավելացումը. «... ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի պետական ռեգիստրի գործակալությունում ներդրված «Մեկ պատուհանի կանգառի սկզբունք» ծրագրի ներդրմամբ, որի արդյունքում քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվել տարբեր հիմնարկություններ այցելելու, տեղեկանքներ ստանալու փոխարեն բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի (կանոնադրություններ և այլն) օրինակելի ձևերը ստանալ Մեկ պատուհանի կանգառի սկզբունք»-ով՝ պետական ռեգիստրի գործակալությունից»:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել էր, որ 2011թ.-ին նախարարությունում թղթի ձեռքբերման համար ծախսվել է 2.535.000 ՀՀ դրամ, իսկ 2012թ.-ի համար նախատեսվել 5.395.000 ՀՀ դրամ: Բացի խնդրված տեղեկությունները, նախարարությունը նաև լրացուցիչ պատճառաբանություն է ներկայացրել, թե ինչով է պայմանավորված 2012թ.-ին թղթի ձեռքբերման համար նախատեսված գումարի ավելացումը: Ըստ նախարարության՝ դա «...պայմանավորված է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության բյուջեների վերամիավորմամբ՝ համաձայն «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքի փոփոխության»:

ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը նույնպես բովանդակալից է. նախարարությունը խնդրված տեղեկություններից բացի պատասխան

գրությանը տրամադրել է նաև լրացուցիչ տեղեկություններ 2011թ.-ի ՀՀ պետական բյուջեով թղթի ձեռքբերման համար նախատեսված գումարի և նախարարության աշխատակիցների քանակի վերաբերյալ:

ՀՀ պաշտպանության նախարարությունը գրավոր մերժել էր տրամադրել ԻԱԿ-ի պահանջած տեղեկությունները. պատասխան գրությանը տեղեկացվել էր, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար 2011թ.-ին թղթի ձեռքբերումն իրականացվել է ՀՀ Կառավարության 23.12.2010թ.-ի N1748 ՆՀԳ որոշման համաձայն՝ փակ ընթացակարգով, իսկ 2012թ.-ի համար նախատեսված ձեռքբերումը կատարվելու է ՀՀ Կառավարության 12.12.2011թ.-ի N1919 ՆՀԳ որոշման համաձայն՝ նույնպես փակ ընթացակարգով: Նախարարությունը նշել էր, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ այդ ընթացակարգով ձեռք բերվող ապրանքների մասին տեղեկությունները համարվում են գաղտնի և ենթակա չեն հրապարակման:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գրավոր հարցմամբ պահանջվող տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում տեղեկատվություն տնօրինողն այդ մասին դիմողին հայտնում է գրավոր՝ նշելով մերժման հիմքը: ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանում հղում էր արված մերժումը հիմնավորող՝ ՀՀ Կառավարության որոշումներին և «Պետական գաղտնիքի մասին» օրենքի հոդվածներին, ուստի մերժումը բխում է ՏԱ մասին օրենքից և օրինական է:

Թերի պատասխանի հեղինակը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է: Պատասխան գրությանը նախարարությունը տրամադրել է միայն խնդրված տեղեկությունների մի մասը. նախարարությունը տրամադրել է տեղեկություններ 2011թ.-ին նախարարության համար թղթի ձեռքբերման նպատակով ծախսված գումարի և թղթի ծավալի վերաբերյալ, իսկ 2012թ.-ի բյուջեով թղթի ձեռքբերման համար նախատեսված գումարի վերաբերյալ տեղեկությունները չի տրամադրել: Ուստի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության պատասխանը համարվել է ոչ լիարժեք:

### Ժամկետները

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով: Հետևապես, պատասխանը չի համարվել ժամկետ խախտած, եթե տրամադրվել է 9 օրացույցային օրվա ընթացքում, որոնցից 5 օրը օրենքով սահմանված ժամկետն է, 2 օրը հաշվարկվել է որպես փոստային առաքման ժամկետ և ևս 2 օրը ոչ աշխատանքային օրերն են՝ շաբաթ և կիրակի: Ամեն դեպքում, անճշտություններից խուսափելու համար ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը և պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի վրա նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Ինչպես նշվեց, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներից ոչ մեկն անպատասխան չի մնացել: 18 նախարարություններից 6-ը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է առանց ժամկետի խախտման, իսկ 12-ը տրամադրել է ժամկետանց պատասխան:

Ժամկետների առումով լավագույնը ՀՀ սփյուռքի նախարարությունն է, որը պատասխան է տրամադրել հարցումն ուղարկելուց 6 օր հետո:

Վատագույն արդյունքը ՀՀ բնապահպանության նախարարությանն է, որից պատասխան ստացվել է հարցումն ուղարկելուց 28 օր անց:

Խնդրված տեղեկությունների տրամադրումը մերժելու համար ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջվել է 13 օր, իսկ թերի պատասխան տրամադրած ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանն անհրաժեշտ է եղել 16 օր:

Նախարարություններն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներին պատասխանել են միջինը 12 օրում:

Նախարարությունների պատասխանելու ժամկետները ներկայացված են ԻԱԿ-ի ինտերնետային կայքում՝ <http://www.foi.am/hy/research/item/1001/>:

## **Թղթի ձեռքբերման համար ծախսված գումարները**

Անդրադառնալով նախարարությունների տրամադրած տեղեկություններին: Քանի որ ՀՀ պաշտպանության նախարարությունը օրենքով նախատեսված կարգով մերժել էր տրամադրել խնդրվող տեղեկությունները, ուստի տվյալները ներկայացված են 17 նախարարությունների տրամադրած տեղեկություններին համապատասխան:

2011թ.-ին թղթի ձեռքբերման համար ամենաքիչ գումարը ծախսել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը՝ 321.000 ՀՀ դրամ: Պատճառն այն է, որ նախարարության ծախսած 1510 կգ թղթից 1110 կգ-ը նախորդ՝ 2010թ.-ի մնացորդն է եղել: Այսինքն, 2011թ.-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն անհրաժեշտ է եղել ձեռք բերել միայն 400 կգ թուղթ: Այսինքն՝ 2011թ.-ին նախարարությունը 400 կգ թուղթ է ձեռք բերել 321.000 ՀՀ դրամով:

Եթե Գյուղատնտեսության նախարարությանն մնացորդի գործոնը հաշվի չառնենք, ապա ամենաքիչ գումարը ծախսել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը՝ 641.100 ՀՀ դրամ. համապատասխանաբար ձեռք է բերվել և ծախսվել է ամենաքիչ ծավալի թուղթը՝

828 կգ: Հիշեցնենք, որ 2010թ.-ին ընդհանուր գրեմական պարագաների ձեռքբերման համար Սպորտի և երիտասարդության նախարարությունը ծախսել էր 2.673.300 ՀՀ դրամ:

2011թ.-ին թուղթ ձեռք բերելու համար ամենաշատ գումարը ծախսել է ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ 6 միլիոն 70 հազար ՀՀ դրամ: Նախարարությունը նաև 2011թ.-ին ամենաշատ ծավալի թուղթն էր ծախսել՝ 18192.5 կգ: Նշենք, որ 2010թ.-ին ընդհանուր գրեմական պարագաների ձեռքբերման համար ՀՀ ֆինանսների նախարարությունը ծախսել էր 29 միլիոն 688 հազար 800 ՀՀ դրամ:

2012թ.-ին թղթի ձեռքբերման նպատակով ամենաշատ գումարը նախատեսվել է ՀՀ ֆինանսների նախարարության համար՝ 10.960.000 ՀՀ դրամ, իսկ ամենաքիչ գումարը՝ ՀՀ սփյուռքի նախարարության համար՝ 840.000 ՀՀ դրամ:

Բոլոր նախարարությունների պատասխաններին կարող եք ծանոթանալ աղյուսակով՝ <http://www.foi.am/hy/research/item/1001/>:



## Տեղեկատվության ազատությունը քաղաքապետարաններում-2012

Վարդենիսի և Վանաձորի քաղաքապետերն անպատասխան են թողել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրկնակի հարցումները ևս: Միայն այս 2 քաղաքապետարաններն են, որ անգամ կրկնակի հարցում ուղարկելուց հետո որևէ կերպ չեն արձագանքել ԻԱԿ-ի հարցումներին: Վարդենիսի և Վանաձորի քաղաքապետանները ներառվել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2012թ.-ի 1-ին եռամսյակային Անցուցակում:

**2012**թ.-ի փետրվարին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով դիմել էր Հայաստանի 49 քաղաքների ղեկավարներին (այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանին)՝ խնդրելով տեղեկություններ տվյալ քաղաքում ձյան մաքրման աշխատանքների համար 2011 և 2012թ.թ.-ին նախատեսված և հատկացված (ծախսված) գումարների վերաբերյալ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի այս նախաձեռնությունը հնարավորություն տվեց պարզել, թե տարբեր մարզեր ներկայացնող քաղաքային համայնքների ղեկավարներն ինչպես են կիրառում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը: Քաղաքապետարանների տրամադրած պատասխանները վերլուծել ենք ըստ 2 չափանիշների. պատասխանների լիարժեքության և դրանց տրամադրման ժամկետների:

### Պատասխանների բովանդակությունը

Քաղաքապետարաններին ուղարկված 49 հարցումներից 34-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը լիարժեք պատասխան է ստացել: Ընդ որում, լիարժեք պատասխաններից 22-ը տրամադրվել է ժամանակին, իսկ 12-ը՝ սահմանված ժամկետների խախտմամբ:

49 հարցումներից 6-ի դեպքում քաղաքապետարանները թերի պատասխան են տրամադրել, 1 հարցման դեպքում էլ պատասխանն անհիմն է եղել: 8 հարցում մնացել է անպատասխան:

Անհիմն պատասխանի հեղինակը Թումանյանի քաղաքապետարանն է: Պատասխանը համարվել է անհիմն, քանի որ պատասխանում նշված էին հարցման բովանդակությունից բացարձակ տարբեր այլ տվյալներ: Քաղաքապետարանին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կրկնակի հար-

ցում ուղարկեց՝ խնդրելով տրամադրել պատշաճ տեղեկատվություն: Ի վերջո, Թումանյանի քաղաքապետարանը ԻԱԿ-ի կրկնակի հարցմանը լիարժեք պատասխան տրամադրեց առանց ժամկետների խախտման:

Թերի պատասխաններ են տրամադրել Արտաշատի, Վեդիի, Աբովյանի, Նոր Հաճնի, Ախթալայի և Գյումրիի քաղաքապետարանները: Այս քաղաքապետարաններն ԻԱԿ-ին տրամադրել էին խնդրված տեղեկությունների միայն մի մասը: Քաղաքապետարանների ղեկավարներին ԻԱԿ-ը կրկնակի հարցումներով է դիմել՝ խնդրելով լրացնել չտրամադրված տեղեկությունները: Վեդիի և Նոր Հաճնի քաղաքապետարանները կրկնակի հարցմանը ժամանակին լիարժեք պատասխան են տրամադրել, իսկ Արտաշատի, Աբովյանի, Ախթալայի և Գյումրիի քաղաքապետարանները կրկնակի հարցումները թողել են անպատասխան:

Ինչպես նշվեց, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 8 հարցում մնացել էր անպատասխան. Վարդենիսի, Եղվարդի, Վանաձորի, Ստեփանավանի, Սպիտակի, Սիսիանի, Գորիսի և Նոյեմբերյանի քաղաքապետարանները չեն պատասխանել ԻԱԿ-ի հարցումներին: Նրանց ևս կրկնակի հարցումներ են ուղարկվել: Արդյունքում, Ստեփանավանի, Սիսիանի և Գորիսի քաղաքապետարանները կրկնակի հարցումներին տրամադրեցին ժամանակին լիարժեք պատասխաններ, իսկ Եղվարդի և Սպիտակի քաղաքապետարանները՝ ուշացած լիարժեք: Նոյեմբերյանի քաղաքապետարանն ի պատասխան ԻԱԿ-ի կրկնակի հարցմանը տրամադրեց անհիմն պատասխան: Պատասխանը համարվել է անհիմն, քանի որ տրամադրվել է խնդրված տեղեկություններից տարբերվող այլ տեղեկություն (տես <http://givemeinfo.am/hy/case/916/>):

www.foi.am

Վարդենիսի և Վանաձորի քաղաքապետանոցներն անպատասխան են թողել նաև Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրկնակի հարցումները: Այսպիսով, միայն այս 2 քաղաքապետարաններն են, որ անգամ կրկնակի հարցում ուղարկելուց հետո որևէ կերպ չեն արձագանքել ԻԱԿ-ի հարցումներին:

### **Պատասխանների վերլուծությունն ըստ ժամկետների**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով: Ուստի, պատասխանը չի համարվել ժամկետանց, եթե տրամադրվել է 9 օրացույցային օրվա ընթացքում, որից 5 օրն օրենքով սահմանված ժամկետն է, 2 օրը հաշվարկվել է որպես փոստային առաքման ժամկետ և ևս 2 օրը ոչ աշխատանքային օրերն են՝ շաբաթ և կիրակի: Ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը և պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի վրա նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Ինչպես նշվեց, քաղաքապետարանները 34 դեպքում լիարժեք պատասխան են տրամադրել: Այս 34 պատասխաններից 22-ը տրամադրվել է ժամանակին, իսկ 12-ը՝ ուշացումով:

Թունանյանի քաղաքապետարանի տրամադրած անհիմն պատասխանը տրամադրվել է առանց ժամկետների խախտման (պատասխանը տես՝ <http://givemeinfo.am/hy/case/854/>): Քաղաքապետարանն առանց ժամկետների խախտման է տրամադրել նաև կրկնակի հարցման լիարժեք պատասխանը (<http://givemeinfo.am/hy/case/892/>):

Թերի տրամադրված 6 պատասխաններից 4-ը տրամադրվել է օրենքով սահմանված ժամկետներում, իսկ 2-ը՝ ուշացումով (Արտաշատի և Գյումրիի քաղաքապետարաններ): Թերի պատասխանների հեղինակներին ուղարկված կրկնակի հարցումներից պատասխան ստացել են 2-ը՝ երկուսն էլ առանց ժամկետների խախտման:

Լուռ մերժման 8 հեղինակներին ուղարկված կրկնակի հարցումներից 2-ը, անպատասխան են մնա-

ցել: Մնացած 6 հարցումներից 4-ի պատասխանները տրամադրվել են ժամանակին (3 լիարժեք և 1 անհիմն պատասխան), 2-ի պատասխանները՝ ժամկետների խախտմամբ:

Այսպես, ԻԱԿ-ի ուղարկած 49 հարցումներից պատասխան ստացել է 41-ը, որից 27-ը տրամադրվել է առանց ժամկետների խախտման, իսկ 14-ը՝ ուշացումով: 15 կրկնակի հարցումներից պատասխան ստացել է 9-ը, որից 7-ը տրամադրվել է ժամանակին, իսկ 2-ը՝ ժամկետների խախտմամբ:

Այսպիսով, ընդհանուր ուղարկված 64 հարցումներից (ԻԱԿ-ի առաջին և կրկնակի հարցումները) պատասխան ստացել է 50-ը, որից 34-ը ժամանակին, 16-ը՝ ուշացումով:

Ժամկետների առումով լավագույն արդյունքը ցույց են տվել Թալինի, Ճամբարակի, Բյուրեղավանի և Տաշիրի քաղաքապետարանները, որոնք լիարժեք պատասխան են տրամադրել հարցումն ուղարկելուց 3 օր հետո: Լավագույններից է նաև Մեղրիի քաղաքապետարանը, որը լիարժեք պատասխան է տրամադրել հարցումն ուղարկելուց 4 օր անց:

Վատագույնը Ալավերդու և Երևանի քաղաքապետարաններն են, որոնք ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել են հարցումն ուղարկելուց համապատասխանաբար 29 և 27 օր հետո:

Քաղաքապետարաններին ուղարկված հարցումների արդյունքները և ժամկետները ներկայացված են աղյուսակով, ԻԱԿ-ի ինտերնետային կայքում՝ <http://www.foi.am/hy/research/item/1015/>:

Հարցումները և դրանց պատասխանները կարող եք ներբեռնել [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքից:

## Կայացավ ՏՎԽ առաջին աշխատանքային քննարկումը

2012թ.-ի հունիսի 29-ից հուլիսի 1-ը «Զրպարտություն և վիրավորանք. Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձը» թեմայով աշխատանքային քննարկում տեղի ունեցավ լրագրողների և փաստաբանների մասնակցությամբ: Միջոցառումը կազմակերպվել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Տեխնիկական աջակցություն տեղեկատվական վեճերի խորհրդին» ծրագրի շրջանակում:

**Յ**անդիպմանը ներկաներին նախ ողջունեց ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման բաժնի ղեկավար Օլիվեր Մկրտչյը, ով կարևորեց ՏՎԽ-ի դերը լրատվամիջոցների դեմ դատական գործերի արտադատական պրակտիկա ձևավորելու գործում: «Թեև քաղաքացիական հասարակության զեկույցները ցույց են տալիս այս տարվա դրությամբ զրպարտության և վիրավորանքի հայցերի թվի զգալի նվազում, կարևոր է, որ տեղական և միջազգային կազմակերպությունները շարունակեն հետևել իրավիճակին և խթանել իրավիճակի բարելավումը այս ոլորտում: Խորհրդի գործունեությանն աջակցելով՝ մենք սատարում ենք վեճերի արտադատական կարգավորման մեխանիզմների կիրառմանը և խրախուսում էքիկայի նորմերին համապատասխան լրագրություն, որն ի վերջո պետք է դրական ազդեցություն ունենա ՁԼՄ դաշտի ընդհանուր որակի վրա»:

ԻԱԿ նախագահ, ՏՎԽ քարտուղար Շուշան Դոյդոյանը քննարկման մասնակիցներին ողջունելով նախ ներկայացրեց ՏՎԽ գործառույթները: «Տեղեկատվական վեճերի խորհուրդն արձագանքում է, երբ մամուլի ազատության հետ կապված խնդրահարույց իրավական հարցեր են ծագում, ինչպես դա եղավ Վճռաբեկ դատարանի՝ լրատվական աղբյուրների սահմանման որոշման դեպքում: Խորհուրդը ծառայում է նաև որպես այլընտրանքային, անաչառ մարմին՝ մամուլի հետ կապված վեճերի լուծման համար: Խորհրդի որոշումները կարող են նաև ունենալ կանխարգելիչ ազդեցություն, երբ վեճի կողմերը փորձում են վեճը կարգավորել առանց դատարանի միջամտության»:

Քննարկման սկզբում «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն, Տեղեկատվական վեճերի խորհրդի անդամ Արայիկ Ղազարյանը



ներկայացրեց զրպարտության և վիրավորանքի հիմքերով դատական գործերի մոնիթորինգի արդյունքները:

Քննարկման հաջորդ հատվածում Երևանի մամուլի ակումբի նախագահ, Տեղեկատվական վեճերի խորհրդի անդամ Բորիս Նավասարդյանը և ԻԱԿ նախագահ, Տեղեկատվական վեճերի խորհրդի քարտուղար Շուշան Դոյդոյանը ներկայացրեցին վիրավորանքի և զրպարտության գործերով Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական եզրակացությունները:

Քննարկման մի առանձին հատված նվիրված էր ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմանը, որով մեկնաբանվում է վիրավորանքի և զրպարտության վերաբերյալ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը: Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման դրույթները ներկայացնում էր ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի ծառայության պետ Արսեն

Բաբայանը: Առավել մեծ հետաքրքրություն և քննարկման առարկա դարձան Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները «տեղեկատվության պատշաճ աղբյուրի», «տեղեկատվության աղբյուրի գաղտնիության», տեղեկատվության աղբյուրը բացահայտելու դեպքում պատասխանատվության վերաբերյալ: «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի լրագրող Գոհար Վեզիրյանն իր վրդովմունքը հայտնեց տեղեկատվության աղբյուրի բացահայտման առնչությամբ. «Առանց այն էլ ընդդիմադիր լրատվամիջոցները գտնվում են տեղեկատվական «շրջափակման» մեջ: Եվ այս պայմաններում լրատվության աղբյուրի բացահայտումը նշանակում է վստահության խախտում, ինչն էլ ենթադրում է լրատվության աղբյուրի կորուստ: Բացի այդ, շատ դեպքերում լրատվության պաշտոնական աղբյուրները տեղեկատվություն են տալիս՝ խնդրելով չնշել իրենց անունը»: Քննարկմանը ներկա լրագրողների մեծ մասն, այնուհանդերձ, Վճռաբեկ դատարանի այս որոշումը գնահատեցին լրագրողական աշխատանքների սահմանափակում:

Աշխատանքային քննարկման հաջորդ օրվա թեման «Ջրպարտությունը և վիրավորանքը էլեկտրոնային լրատվամիջոցներում» էր: Այն ներկայացրեցին Արայիկ Ղազարյանը և «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր, Տեղեկատվական վեճերի խորհրդի անդամ Արամ Աբրահամյանը: Վիճահարույց է նյութի ներքևում տեղադրված մեկնաբանությունների /քոմենթների/ վերահսկումը, քանի որ բացի տվյալ օրվա նյութերից, ընթերցողները քոմենթներ են գրում անգամ 1 տարվա վաղեմություն ունեցող նյութերի մասին: Ա. Աբրահամյանն էլ նշեց, որ, օրինակ, իրենց էլեկտրոնային էջում նոր քոմենթների մասին մոդերատորը հաղորդագրություն է ստանում, ինչի շնորհիվ մեկնաբանությունները վերահսկելի են:

Այնուհանդերձ, խնդիրը առկա է ոչ միայն հայկական, այլև ամբողջ աշխարհի օճ լայն լրատվամիջոցների համար, և այն դեռևս հստակ լուծումներ չի ստացել:

Հանդիպմանը ՏՎԽ-ի անդամներին լրագրողներն առաջարկեցին նաև մինչ փորձագիտական եզրակացության հրապարակումը եզրակացության նախնական տարբերակը ներկայացնել դատական վեճում գտնվող կողմերին, լսել նրանց դիտարկումները: Փաստաբաններն էլ առաջարկեցին

ՏՎԽ փորձագիտական եզրակացությունը հրապարակել դատական վեճի ավարտեցին հետո միայն, որպեսզի եզրակացությունը չդիտվի որպես դատական քննությանը միջամտություն: ՏՎԽ անդամները խոստացան քննարկել բոլոր առաջարկները և ամփոփ արդյունքները հրապարակել:

Նշենք, որ Տեղեկատվական վեճերի խորհուրդը հիմնադրվել է 2011թ.-ի մայիսի 1-ի ՄԻՊ Կարեն Անդրեասյանի նախաձեռնությամբ, որի հիմնական նպատակն է պաշտպանել խոսքի ազատությունն ու տեղեկատվության մատչելիությունը:

Տեղեկատվական վեճերի խորհրդի հիմնադիր անդամներ են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյրոյանը, Երևանի մամուլի ակումբի նախագահ Բորիս Նավասարդյանը, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը, «Արմի քնսալք» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն Արա Ղազարյանը, «Արմմեդիա» ծրագրի տնօրեն, լրագրող Մանանա Ասլամազյանը:

Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտությանը, վիրավորանքին, մասնավոր կյանքի պաշտպանությանը և տեղեկատվության ազատությանը վերաբերող դատական գործերի կապակցությամբ խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացություններով հանդես գալը, ինչպես նաև օրենսդիր և գործադիր իշխանություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, քաղաքացիներին համապատասխան հարցերի շուրջ անհրաժեշտ խորհրդատվությամբ ապահովելը:

ՏՎԽ բոլոր եզրակացություններին կարող եք ծանոթանալ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ինտերնետային կայքում՝ <http://www.foi.am/hy/IDC/>

# ՏՎԽ-ի փորձագիտական եզրակացությունն «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմեննիի» պարբերականների դեմ գործի վերաբերյալ

Մայիսի 11-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը հրապարակել է «Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմեննիի» պարբերականների հայցի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն:

## Ամփոփագիր

**«Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմեննիի» պարբերականների հայցի վերաբերյալ եզրակացության**

Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի կրոնական կազմակերպության փաստաբանը դիմել է Տեղեկատվական վեճերի խորհրդին՝ խնդրելով կարծիք հայտնել «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմեննիի» շաբաթաթերթերի դեմ 18.11.2011թ.-ին ներկայացրած հայցապահանջի վերաբերյալ: Տեղեկատվական վեճերի խորհուրդը քննելով սույն գործը՝ հրապարակում է իր մասնագիտական եզրակացությունը:

Նշյալ լրատվամիջոցներում 2011թ. հոկտեմբերին տպագրվել են հոդվածներ և լուսանկարներ, որոնք, ըստ «Հայաստանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Կյանքի խոսք» եկեղեցի» կրոնական կազմակերպության», վիրավորական և զրպարտչական բնույթի են: Մասնավորապես, վիրավորական են «история с сектантством и порнухой» և «Աղանդախառն պոռնոլուսանկարների թեման «ծաղկեց» մանկապղծության մեղադրանքով» հոդվածների վերնագրերը, հոդվածներում «աղանդ» բառի հասցեագրումը կրոնական կազմակերպությանը: Կրոնական կազմակերպությունը զրպարտչական է համարել հոդվածների վերնագրերը, քանի որ դրանցով արվում է փաստի մասին հայտարարություն առ այն, որ կրոնական կազմակերպությունը իր դավանանքով և գործունեությամբ քարոզում է հակաբարոյական արժեքներ՝ պոռնոգրաֆիա, ինչպես նաև պոռնոգրաֆիկ նյութերի տարածում, մանկապղծության հրահրում

և նման արարքների հովանավորչություն, ինչպես նաև այն, որ Անժելա Սարգսյանը կրոնական կազմակերպության անդամ է և այլն:

Բացի այդ, կրոնական կազմակերպությունը վիրավորական և զրպարտչական է համարել համակարգչային եղանակով մոնտաժված լուսանկարները, որոնցով, ըստ հայցվորների, կարծիք է կազմվում, թե կազմակերպության անդամները դրսևորում են նույն վարքագիծը, ինչ ՋԼՄ-ներով տարածվել էր լուսանկարում պատկերված կնոջ՝ դերասանուհի Անժելա Սարգսյանի մասին:

«Կյանքի խոսք» կրոնական կազմակերպությունը և կազմակերպության ղեկավար Արթուր Սիմոնյանն ընդդեմ «Իրավունք հետաքննություն» և «Արգումենտի նեղելի վ Արմեննիի» պարբերականների հայց են ներկայացրել դատարան՝ դատարանից խնդրելով վիրավորանքի հիմքով պարտավորեցնել լրատվամիջոցներին հրապարակված ներողություն խնդրել և հրապարակել վճիռը, իսկ զրպարտության հիմքով հրապարակել հերքում, ինչպես նաև որպես փոխհատուցում պատասխանողներից գանձել 36000 ՀՀ դրամ՝ 4000 դրամ պետական տուրքի և 32000 թարգմանության և նոտարական ծախսերի դիմաց:

**Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է**, որ խնդրո առարկա վեճը շոշափում է մի կողմից լրատվամիջոցների ազատ արտահայտվելու իրավունքը և մյուս կողմից քաղաքացիների մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը:

«Աղանդ» բառը նույնիսկ իր սովորական, առօրյա գործածական իմաստով կարող է անհանգստություն պատճառել, ցնցել և այդ իմաստով անընդունելի համարվել կրոնական որոշ խմբերի համար: Այդուհանդերձ, այդ հանգամանքը դեռ բավարար

www.foi.am

չէ պնդելու համար, որ լրատվամիջոցներն անցել են թույլատրելի քննադատության շրջանակները՝ ըստ ժամանակակից ժողովրդավարական սկզբունքների: Այստեղ էական է այն, թե աղանդ բառն ինչ համատեքստում է օգտագործվել:

Այս իմաստով **Խորհուրդը գտնում է**, որ թեև «աղանդ» բառն ինքնին արատավորող իմաստ չի պարունակում, սակայն դրա շարունակական և շեշտադրված օգտագործումը երկու հոդվածների ընդհանուր համատեքստի լույսի ներքո խնդրահարույց է:

**Խորհուրդը գտնում է**, որ լրատվամիջոցները կրոնական կազմակերպության գործունեության և նրա կողմից քարոզվող գաղափարների վերաբերյալ իրենց գնահատականները, կարծիքները և դատողությունները արտահայտելիս չեն ունեցել փաստացի տվյալներ, այլ հիմնվել են մեկ փաստական տվյալի, այն է՝ երրորդ անձի հայտարարության վրա, դրանից բխեցրել են ընդհանուր բնույթի վերացական մի շարք եզրահանգումներ և դատողություններ: Եվ երբ բացակայում են փաստական հանգամանքները, առաջին պլան է մղվում Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը այն մասին, որ փաստական տվյալների բացակայության պայմաններում առերևույթ է դառնում արժանապատվությունը արատավորելու դիտավորության առկայությունը: Իսկ այս չափորոշիչի առկայությունն էական է հայտարարությունը վիրավորական կամ զրպարտող բնույթի համարելու համար:

**Խորհուրդը գնահատել է** նաև հոդվածներին ուղեկցող լուսանկարները: Թեև որպես ծաղրանկարներ դրանք համարվում են ազատ արտահայտվելու եղանակ և գտնվում են ազատ խոսքի պաշտպանության տակ, սակայն հոդվածների բովանդակային մասում փաստական տվյալների բացակայությունն առարկայազուրկ էր դարձնում կազմակերպության ատրիբուտների և նրա ղեկավարի պրովոկացիոն տեսքով պատկերումը ծաղրանկարներում: Արդյունքում, ծաղրանկարների մատուցման նման եղանակը կարող էր վիրավորել կրոնական կազմակերպության անդամների կրոնական զգացմունքները:

**Խորհուրդը գտնում է**, որ հոդվածի ընդհանուր համատեքստը և դրանում նաև «աղանդ» բառի շարունակաբար և հետևողականորեն օգտագործումը լրատվանյութը վերածում է կրոնական ատելություն սերմանող կամ հրահրող խոսքի:

**Խորհուրդը նաև գտնում է**, որ գործի փաստերը միանգամայն հնարավորություն են տալիս վեճը լուծել արտադատական իրավակարգավորման եղանակներով, և կողմերին կոչ է անում օգտվել այդ հնարավորությունից:

*Տեղեկատվական վեճերի խորհուրդ*

*11 մայիսի 2012թ.*

# ՏՎԽ-ի փորձագիտական եզրակացությունը փաստաբան Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի վճռի վերաբերյալ

Մայիսի 30-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը հրապարակել է «Հրապարակ» օրաթերթի դեմ փաստաբան Արթուր Գրիգորյանի հայցի հիման վրա Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2012 թ. մարտի 7-ին կայացրած վճռի վերաբերյալ իր փորձագիտական եզրակացությունը:

**2012**թվականի մարտի 7-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը «Հրապարակ» օրաթերթի դեմ փաստաբան Արթուր Գրիգորյանի կողմից բերված հայցի շրջանակներում կայացրել է վճիռ, որում արտահայտել է իրավական դիրքորոշումներ մի շարք խնդրահարույց հարցերի առնչությամբ, որոնք ներկայումս տարբեր երկրներում լրագրողական համայնքի քննարկման առարկա են: Խոսքը վերաբերում է սոցիալական ցանցերից դեպի ավանդական ՁԼՄ-ների դաշտ հորդող տեղեկատվության պաշտպանվածության շրջանակներին՝ այնպիսի հանգամանքներում, երբ արդի պայմանների ներքո մեդիա տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ էլեկտրոնային մեդիան ակտիվ կերպով զուգամիտվում է տպագիր մամուլի հետ:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը, Խորհուրդն իր նախաձեռնությամբ ներկայացնում է իր նկատառումները դատարանի արտահայտած դիրքորոշումների վերաբերյալ:

Նշված գործով հայցապահանջը բերվել էր լրատվամիջոցի էլեկտրոնային կայքում հրապարակված հոդվածին ի պատասխան մի խումբ ընթերցողների կողմից կատարված վեց մեկնաբանությունների հիմքով (այսուհետ՝ քոմենթներ), որոնցում, ըստ հայցվորի, հնչել էին վիրավորական և զրպարտող բնույթի արտահայտություններ: Քանի որ մեկնաբանություններ կատարած անձինք հայտնի չէին, հայցապահանջը բերվել էր լրատվամիջոցի դեմ՝ անկախ այն հանգամանքից, որ վիճահարույց արտահայտությունները լրատվամիջոցին չէին:

Իր որոշման պատճառաբանական մասում դատարանը սահմանել է, որ քանի որ հայցվորը մինչև դատարան դիմելը լրատվամիջոցին չի ներկայացրել մեկնաբանությունները ջնջելու և հեռացնելու մասին պահանջ, լրատվամիջոցը չէր կարող կրել այլ անձանց հեղինակած քոմենթները հեռացնելու պարտականություն, քանի որ այդպիսով կսահմանափակեր իր ընթերցողների ազատ արտահայտվելու իրավունքը, որը խոսքի ազատության այնպիսի միջամտություն է, որն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակարգում: Շարունակելով իր եզրահանգումները, դատարանը գտել է, որ քանի որ քոմենթների հեղինակներն այլ անձինք են, իսկ լրատվամիջոցը սոսկ տրամադրել էր ֆորում այդ քոմենթների համար, ինչպես նաև այն, որ լրատվամիջոցը մի որոշ ժամանակ հետո ջնջել ու հեռացրել էր նշված քոմենթները, լրատվամիջոցի կողմից վիրավորելու կամ զրպարտելու դիտավորություն առկա չէր:

**Տեղեկատվական վեճերի խորհուրդը ողջունում է** սույն գործով դատարանի կայացրած վճիռը, քանի որ դատարանի վերոնշյալ մոտեցումը նկատելիորեն ընդլայնում է էլեկտրոնային լրատվամիջոցների պաշտպանվածության շրջանակները:

**Միևնույն ժամանակ Խորհուրդը գտնում է**, որ ցանկալի կլիներ, որ դատարանն իր որոշմամբ անդրադառնար հարցի մյուս կարևոր կողմերին ևս: Այսպես, միջազգային իրավունքի և պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ լրատվամիջոցի պատասխանատվության հարցը լուծելիս դատարանները և կարգավորող իրավական նորմերը գնահատող հատկանիշներ են համարում նաև այնպիսի հանգամանքներ, ինչպիսին են լրատվական գործունեությունն իրականացնողի կողմից քոմենթների մասին իրազեկված լինելու և քոմենթներ

րի դաշտը որոշակիորեն վերահսկելու հանգամանքները (Տես, ի թիվս այլ փաստաթղթերի, Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000թ.-ի հունիսի 8-ի 2000/31/ԵՅ հրահանգ «Ներքին շուկայում տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների, մասնավորապես, էլեկտրոնային առևտրի որոշ իրավական հայեցակետերի մասին», հոդված 14: Տես նաև Դելֆին ընդդեմ Եստոնիայի (որոշ.), ՄԻԵԴ, թիվ 64569/09, կոմունիկացված 11/02/2011թ.-ին: Տես նաև Մարդու իրավունքների Դելսինյան հիմնադրամի amicus curie ընթացակարգի շրջանակներում ներկայացված նկատառումները Դելֆին ընդդեմ Եստոնիայի գործով):

Այլ կերպ ասած, կարևոր է հաշվի առնել, թե արդյոք լրատվություն տարածողը որոշակիորեն կառավարում է իր նորությունների պորտալի վրա տեղադրված քոմենթների հոսքը: Այնպիսի փաստական հանգամանքներ, ինչպիսին են, օրինակ, լրատվամիջոցի կողմից բանալի բառերի միջոցով որոնողական համակարգերի կիրառումը, ընթերցողներին վիրավորական կամ զրպարտող բնույթի քոմենթները ընդգծելու հնարավորության տրամադրելը, լրատվություն տարածողի կողմից հրապարակման ենթակա քոմենթների նախորդ ընտրությունը (այլ կերպ՝ որոշակի խմբագրական գործողությունների կատարումը), գնահատող հատկանիշներ են լրատվամիջոցի կողմից քոմենթների պորտալը որոշակիորեն կառավարելու փաստը հաստատված համարելու համար, որն էլ իր հերթին հիմք է լրատվական գործունեություն իրականացնողի պատասխանատվության հարցը լուծելիս: Բոլոր դեպքերում, գնահատման առարկա պետք է դառնա ոչ միայն այն հանգամանքը, թե արդյոք քոմենթների հեղինակը լրատվություն տարածողն է, թե ոչ, այլ նաև, թե արդյոք քոմենթների դաշտի կառավարումը լրատվամիջոցի կողմից զուտ մեխանիկական և պասիվ բնույթի է, թե՛ ոչ: Եթե լրատվամիջոցն իրականացնում է գործուն և ակտիվ բնույթի վերահսկողություն, ապա այս հանգամանքը կարող է հարց բարձրացնել լրատվամիջոցի պատասխանատվության մասին:

Տվյալ դեպքում թեև դատարանը հաշվի է առել այն փաստը, որ մինչև դատարան դիմելը հայցվորը վիճահարույց քոմենթները հեռացնելու պահանջով լրատվամիջոցին չէր դիմել և հետևաբար լրատվամիջոցը իրազեկված չի եղել իր հարթակում վիրա-

վորական և զրպարտող բնույթի քոմենթների առկայության մասին, այդուհանդերձ, դատարանը բոլորովին քննության առարկա չի դարձրել վերը նշված երկրորդ հանգամանքի առկայությունը՝ թե որքանով էր լրատվամիջոցը կառավարում (վերահսկում) քոմենթների հոսքը իր էլեկտրոնային էջում:

**Խորհուրդը գտնում է**, որ դատական ստուգման նման շրջանակները չեն ապահովում արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորություն: Ավելին, նման իրավակարգավորումը հակասում է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 9-րդ կետին, համաձայն որի՝ եթե տեղեկատվության աղբյուրը հայտնի չէ, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը: Տվյալ դեպքում քոմենթների հեղինակները հայտնի չէին, սակայն այնքանով, որքանով այդ քոմենթները հրապարակայնորեն տարածվել են ընկերության տրամադրած միջավայրից, ընկերությունը, թեև անկախ իր կամքից, դառնում է իրավահարաբերության սուբյեկտ:

**Այս առումով Խորհուրդը համաձայն չէ** «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ ընկերության դիրքորոշման հետ դատական քննության ընթացքում, համաձայն որի ընկերությունը որևէ պարտականություն չի կրում իր էջում հրապարակված այլոց մեկնաբանությունների համար, քանի դեռ դրանք հոսում են սոցիալական ցանցերից և չեն պատկանում բովանդակություն արտադրողին: Ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի 10-րդ հոդվածի 2-րդ մասի, տեղեկություններ և զաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ: Յուրաքանչյուր ոք ազատ խոսքի իրավունք ձեռք բերելու հետ միասին ձեռք է բերում նաև որոշակի պարտականություններ: Իրավունք և պարտականություն հասկացությունները քայլում են ձեռք ձեռքի տված: Այս ձևաչափը շարունակում է մնալ անփոփոխ՝ նույնիսկ մեդիա տեխնոլոգիաների սրընթաց զարգացման արդի ժամանակաշրջանում: Հետևաբար, զուտ այն հանգամանքը, որ լրատվամիջոցը տրամադրել է տեխնիկական հարթակ այլոց մեկնաբանությունների համար, լրատվամիջոցին չի ազատում իր պարտականություններից և պարտավորություններից:



**Խորհուրդը գտնում է**, որ վերը շարադրված իրավակարգավորմամբ առաջնորդվելիս կապահովվի հանրային և անհատական շահերի, արտահայտվելու ազատության և անձի արժանապատվության իրավունքների միջև ողջամիտ հավասարակշռություն:

Հաշվի առնելով նշվածը, Խորհուրդը.

- գտնում է, որ Սահմանադրական դատարանի ՍԴՈ 997 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև էլեկտրոնային լրատվամիջոցների հարթակից տարածվող «քոմենթների» առնչությամբ:
- Կոչ է անում բոլոր ՁԼՄ-ներին իրականացնել ընթերցողների մեկնաբանությունների մոդերացիա՝ ազատ արտահայտվելու իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ներքո:
- Կոչ է անում էլեկտրոնային լրատվամիջոցներին մշակել և իրենց ինտերնետային կայքերում տեղադրել մոդերացիայի կանոններ, որպեսզի դրանք տեսանելի լինեն ընթերցողներին, և այդպիսով ապահովվի մոդերացիայի կանոնների կիրառման հստակություն և թափանցիկություն:

***Տեղեկատվական վեճերի խորհուրդ***

***30 մայիսի, 2012թ.***

## **ՏՎԽ-ի փորձագիտական եզրակացությունը Ա. Ավետիսյանն ընդդեմ Լ. Բարսեղյանի դեմ դատական հայցի վերաբերյալ**

Հունիսի 7-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը հրապարակել է ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ և իրավապաշտպան Լևոն Բարսեղյանի դեմ «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանի դատական հայցի վերաբերյալ իր փորձագիտական եզրակացությունը:

**2011** թվականի օգոստոսի 9-ին «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանը դիմել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ և իրավապաշտպան Լևոն Բարսեղյանի՝ պահանջելով հրապարակայնորեն ներողություն խնդրել [www.asparez.am](http://www.asparez.am) կայքում հրապարակված վիրավորող և զրպարտող բնույթի հրապարակումների համար: Պահանջել է նաև փոխհատուցել 2 մլն դրամ՝ վիրավորանքի և զրպարտության համար, և 200.000 դրամ՝ դատական ծախսերի դիմաց:

Ըստ գործի փաստերի, երեք վիճահարույց հողվածները հրապարակվել են հետևյալ հերթականությամբ. «Կան բաներ, որ չեն ներվում» վերնագրով հոդվածը հրապարակվել է 11/06/2011թ.-ին, «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» վերնագրով հոդվածը հրապարակվել է 15/06/2011թ.-ին և վերջին՝ «Ընտանեկան կապալին էին հարվածելու» վերնագրով հոդվածը հրապարակվել է 16/06/2011թ.-ին: 23/06/2011թ.-ին Արման Ավետիսյանը նամակ է ուղարկել Լևոն Բարսեղյանին՝ պահանջելով տպագրել հերքում կամ հրապարակել իր նամակի բովանդակությունը՝ որպես պատասխան: Լևոն Բարսեղյանը Ա. Ավետիսյանի ուղարկած տեքստը հրապարակել է 30/06/2011թ: 04/08/2011թ.-ին Արման Ավետիսյանը հայցադիմումով դիմել է դատարան, որը մուտքագրվել է 09/08/2011թ: Պատասխանողը, ի թիվս այլ պնդումների, դատաքննության ընթացքում դատարանին է ներկայացրել «Հայցային վաղեմություն կիրառելու մասին» դիմում՝ պնդելով, որ հայցային վաղեմության ժամկետը լրացել է

23.07.2011թ.-ին, մինչդեռ հայցը ներկայացվել է 04.08.2011թ.-ին:

Խորհուրդը գտնում է, որ սույն գործով առկա են հայցային վաղեմություն կիրառելու նախապայմաններ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ մասի ներքո, որը նշում է հետևյալը. «Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում»:

Գործի փաստերից ակնհայտորեն պարզ է, որ հայցվորը վիճահարույց հոդվածների մասին իմացել է առնվազն 23/06/2011թ.-ին, երբ վերջինս նամակով դիմել է Լևոն Բարսեղյանին՝ հերքման կամ պատասխանի պահանջով: Հրապարակային դատաքննության ընթացքում հայցվորն ընդունել է այս փաստը: Հետևաբար, հայցվորը դատական հայցը պետք է ներկայացրած լիներ նամակի ամսաթվից հետո մեկ ամսվա ընթացքում՝ մինչև 23/07/2011թ.-ը, մինչդեռ դատական հայցը ներկայացվել է 04/08/2011թ.-ին:

Նման հանգամանքներում հայցվորը չի կարող օգտվել 1087.1 հոդվածի 13-րդ մասով սահմանված հայցային վաղեմության վեցամսյա ժամկետի պաշտպանությունից, քանի որ այդ դրույթով իրականում սահմանված է հայցային վաղեմության ոչ թե երկու, այլ մեկ ժամկետ՝ բաղկացած երկու տարրից: Առաջին տարրով սահմանված ժամկետի խախտումը առ ոչինչ է դարձնում երկրորդ տարրով սահմանված ժամկետի կիրառությունը, քանի որ դրանք գործում են որպես մեկ ամբողջություն:

Այսինքն, եթե անձը բաց է թողել հայցային վաղեմության առաջին ժամկետը՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին տեղեկացվելու հետո մեկ ամսվա ընթացքում դատարան դիմելու հնարավորությունը, ապա չի կարող հիմնվել երկրորդ՝ վիրավորանքի կամ զրպարտության պահից հետո վեց ամսվա ընթացքում դատարան դիմելու ժամկետի վրա: Անթույլատրելի է նաև պնդելը, որ դատական ավելի լայն պաշտպանություն սահմանելու առումով կարելի է հիմնվել միայն երկրորդ ժամկետի վրա: Հակառակ դեպքում օրենսդիրը կսահմաներ մեկ ընդհանուր ժամկետ՝ վեց ամիս՝ առաջարկելով ավելի պարզ իրավակարգավորում: Մինչդեռ օրենսդիրը, նպատակ ունենալով մեծացնել լրատվամիջոցների պաշտպանությունը դատական հայցերից, սահմանել է սահմանափակ ժամկետով առաջնային պայման՝ մեկ ամիս վիրավորանքի կամ զրպարտության մասին հրապարակման հայտնի դառնալու պահից հետո: Երկրորդ ժամկետը (6-ամսյա ժամկետը) ածանցյալ է առաջին ժամկետին և այն անկախ կիրառություն չունի: Դա երևում է թեկուզ տեքստի տառացի մեկնաբանությունից, որտեղ երկու նախադասությունները միմյանցից բաժանվում են ոչ թե «կամ», այլ «սակայն» շաղկապով, այսինքն՝ օրենսդիրը սահմանում է ոչ թե առաջնային իրավակարգավորումից այլընտրանքային, այլ ածանցվող իրավակարգավորում:

Ցավոք, այս խնդրին հստակորեն չի անդրադարձել ՀՀ Վճռաբեկ դատարանը իր թիվ ԵԿԴ/2293/02/10 վճռում, որում, ելնելով 1087.1 հոդվածի հիմքով միատեսակ դատական պրակտիկա ձևավորելու անհրաժեշտությունից, արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ: Այս խնդրին չի անդրադարձել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր հայտնի ՍԴՈ-997 որոշումով: Այդուհանդերձ, նույնիսկ նման հանգամանքներում, ելնելով 1087.1 հոդվածի 13-րդ մասի դրույթների տառացի մեկնաբանությունից, **Խորհուրդը գտնում է**, որ հայցը ենթակա է մերժման՝ ժամկետանց լինելու հիմքով:

*Տեղեկատվական վեճերի խորհուրդ*

*07.06.2012թ.*

# ՍԵՎ ՑՈՒՑԱԿ

Այս անձինք խախտել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը 2012թ.-ի առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում:

## 1-ին եռամսյակ

### ● **Վոլոդյա Խլոյան- Վարդենիսի քաղաքապետ**

ԻԱԿ-ը 2012թ.-ի փետրվարի 17-ին ուղարկված գրավոր հարցմամբ Վարդենիսի քաղաքապետից խնդրել էր տեղեկություններ Վարդենիս քաղաքի բյուջեով ձյան մաքրման աշխատանքների համար նախատեսված և հատկացված գումարների վերաբերյալ: Քաղաքապետարանը հարցմանը չի պատասխանել: ԻԱԿ-ը 2012թ.-ի մարտի 15-ին կրկնակի հարցում է ուղարկել քաղաքապետին, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Հարցումը տես՝ [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքում:

### ● **Սամվել Դարբինյան-Վանաձորի քաղաքապետ**

ԻԱԿ-ը 2012թ.-ի փետրվարի 21-ին ուղարկված տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ Վանաձորի քաղաքապետից խնդրել էր տեղեկություններ Վանաձոր քաղաքի բյուջեով ձյան մաքրման աշխատանքների համար նախատեսված և հատկացված գումարների վերաբերյալ: Քաղաքապետը կենտրոնի հարցմանը չի պատասխանել: ԻԱԿ-ը 2012թ.-ի մարտի 15-ին կրկնակի հարցում է ուղարկել քաղաքապետին, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Հարցումը տես՝ [www.givemeinfo.am](http://www.givemeinfo.am) կայքում:

## 2-րդ եռամսյակ

### ● **Սերժ Սարգսյան - Հայաստանի հանրապետական կուսակցության նախագահ**

2012թ.-ի մայիսի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Հայաստանի հանրապետական կուսակցությանը՝ խնդրելով տեղեկություններ 2012թ. մայիսի 4-ին Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում կազմակերպած միջոցառման վերաբերյալ: Կուսակցությունը հարցումը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը հունիսի 14-ին կրկնակի հարցում է ուղարկել կուսակցությանը, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/950/> եւ <http://givemeinfo.am/hy/case/983/>

### ● **Արամ Սարգսյան - Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ**

2012թ.-ի ապրիլի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Հայաստանի դեմոկրատական կուսակցությանը՝ խնդրելով տեղեկություններ կուսակցության կողմից նախընտրական քարոզչության վրա ծախսված գումարների վերաբերյալ: Կուսակցությունը հարցումը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը մայիսի 16-ին կրկնակի հարցում է ուղարկել կուսակցությանը, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/933/>:

### ● **Գագիկ Ծառուկյան - Բարգավաճ Հայաստան կուսակցության նախագահ**

2012թ.-ի ապրիլի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Բարգավաճ Հայաստան կուսակցությանը՝ խնդրելով տեղեկություններ կուսակցության կողմից նախընտրական քարոզչության վրա ծախսված գումարների վերաբերյալ: Կուսակցությունը հարցումը թողել է անպատասխան: ԻԱԿ-ը մայիսի 16-ին տեղեկություն ստանալու կրկնակի հարցում է ուղարկել կուսակցությանը, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/928/>:

### ● **Լևոն Տեր-Պետրոսյան - «Հայ ազգային կոնգրես» դաշինքի նախագահ**

2012թ.-ի ապրիլի 25-ին ԻԱԿ-ը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր «Հայ ազգային կոնգրես» դաշինքին՝ խնդրելով տեղեկություններ կուսակցության կողմից նախընտրական քարոզչության վրա ծախսված գումարների վերաբերյալ: Դաշինքը հարցումը թողել է անպատասխան: Մայիսի 16-ին տեղեկություն ստանալու կրկնակի հարցում է ուղարկվել, սակայն կրկնակի հարցումը նույնպես մնացել է անպատասխան: Տես՝ <http://givemeinfo.am/hy/case/929/>:

www.foi.am  
www.givemeinfo.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԴԿ

Բացե	ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
Բեր./Ֆաքս,	560 360, 521775 #422
Էլ. փոստ	foi@foi.am
Կայք	www.foi.am